



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

ք. Երևան

«04» սեպտեմբերի 2017 թ.

**Հ Ր Ա Մ Ա Ն № 43-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈՔՐ  
ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»  
ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ - 2017» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ  
ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ**

1. Կազմակերպել «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ - 2017» միջազգային մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

**ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՀՐԱՎԵՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈՔՐ  
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»  
ԿՈՂՄԻՑ ԱՆՅԿԱՑՎՈՂ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ  
ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ - 2017» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ**

### 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Կիրառական հեղափոխությունների համատեղ ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ - 2017» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Ռուսաստանի Դաշնության «Գիտության և տեխնիկայի ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացմանն աջակցության հիմնադրամի» (այսուհետ՝ Հիմնադրամ) միջև 2016 թվականի հունիսի 27-ին կնքված «Համագործակցության մասին» համաձայնագրի՝ որպես «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ - 2016» մրցույթի շարունակություն:
- 1.2. Կոմիտեն 18 կամ 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի գիտական և գիտատեխնիկական գործունեության «Բնական գիտություններ» և «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա» բնագավառների՝ հրավերի Հավելված 1-ում թվարկված մասնագիտություններով գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծախսային ծրագրի միջոցներով: Մրցույթի արդյունքում կֆինանսավորվեն մինչև երեք համատեղ ծրագրեր:

- 1.3. Սույն Մրցույթին մասնակցության գիտական նախագծերի հայտերը (այսուհետ՝ Հայտ) ներկայացվում են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գիտնականներից կազմված խմբերի կողմից՝ հայաստանյան կողմից ներառելով 2-ից 4 մասնակից՝ ներառյալ խմբի ղեկավարը (այսուհետ՝ Ղեկավար):
- 1.4. *Նախագծի հայերեն անվանումը պետք է համընկնի ռուսաստանյան կողմի ներկայացրած նախագծի անվանման հետ: Հայտը հայաստանյան կողմը ներկայացնում է Կոմիտե, իսկ ռուսաստանյան կողմը՝ Հիմնադրամ:*
- 1.5. Հայտը չի քննարկվում, եթե՝
- *բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ թեմայի կամ ծրագրի հետ,*
  - հեղինակի կողմից նախկինում իրականացված թեմայի կամ ծրագրի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի (ասուհետ՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն,
  - *միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների:*
- 1.6. Հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Ղեկավարը պետք է գործի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթներին համապատասխան: Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:
- 1.7. Ծրագրի շրջանակներում համատեղ ստացած գիտական արդյունքի նկատմամբ հեղինակային իրավունքի շուրջ ծագած վեճերը հայաստանյան և ռուսաստանյան կողմի ղեկավարները պետք է լուծեն խորհրդակցությունների և քննարկումների միջոցով:
- 1.8. Ծրագրի շրջանակներում համատեղ իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի և Հիմնադրամի կողմից ստացած աջակցության մասին.
- *Հեղափոխությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ \_\_\_ և ՌԴ ԻԱՀ\_\_\_ գիտական համալսելի ծրագրին տրամադրված ֆինանսական աջակցության շրջանակներում:*
  - *Исследование выполнено при финансовой поддержке ГКН МОН РА и ФСИ РФ в рамках*

совместного научного проекта \_\_\_ и \_\_\_ соответственно.

- This work was supported by the RA MES State Committee of Science and Russian Federation Foundation for Innovation Support in the frames of the joint research project \_\_\_\_\_ and \_\_\_\_\_ accordingly.

- 1.9. Ծրագրի իրականացման ընթացքում Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (12-ամսյա) իսկ ավարտից հետո՝ ամփոփիչ Հաշվետվություն, որոնք ենթարկվում են գիտական փորձաքննության:
- 1.10. Ծրագրի ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ Հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի գիտական փորձաքննության բացասական եզրակացության հիման վրա:
- 1.11. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի և Հաշվետվության անոտացիաները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

## **2. Մասնակիցներին ներկայացվող պահանջները**

- 2.1. Հայաստանյան խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ, ինչպես նաև Ծրագրի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:
- 2.2. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Ծրագրերի ֆինանսավորման սկիզբը:

**Ուշադրություն.** «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՌԴ ԻԱՀ - 2016» միջազգային մրցույթի շրջանակներում իրականացվող ծրագրերի ղեկավարները և կատարողները չեն կարող մասնակցել սույն Մրցույթին:

- 2.3. Ղեկավար կարող է լինել գիտական աստիճան ունեցող անձը (ուժ 70 տարին չի լրացել մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը), ով ունի առնվազն 5 (հինգ) տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Scopus, Thomson Reuters և այլն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ անդամ-պետությունների Բարձրագույն որակավորման

հանձնաժողովների ցանկերում ընդգրկված գրախոսվող ամսագրերում հրապարակված առնվազն 5 (հինգ) հոդված կամ 2 (երկու)՝ առնվազն 5 (հինգ) տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բուհի գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն): Մեկ մենագրությունը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված 3 (երեք) հոդվածի:

2.4. Խմբի անդամները (ներառյալ Ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.5. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտաշխատող կամ ասպիրանտ կամ մագիստրոս կամ մագիստրատուրայի ուսանող:

2.6. *Մրցույթի հայաստանյան և ռուսաստանյան կողմի հայտարարումները միմյանց հետ համաձայնեցնում են ներկայացվող նախագծի բովանդակությունը, որը կարող է տարբեր լինել՝ կախված կողմերի առջև դրված խնդիրներից, սակայն ներկայացված նախագծի հայերեն և ռուսերեն վերնագրերը պետք է ամբողջությամբ համընկնեն: Վերջնական ձևավորված և համաձայնեցված Հայտը հայաստանյան կողմը ներկայացնում է Կոմիտե, իսկ ռուսաստանյան կողմը՝ Հիմնադրամ:*

2.7. Սույն Մրցույթին չեն մասնակցում այն նախագծերի Հայտերը, որոնք՝

- ներկայացվել են միայն Կոմիտե կամ միայն Հիմնադրամ,
- Կոմիտե կամ Հիմնադրամ ստացվել են Հայտերի ընդունման համար հայտարարված ժամկետներից ուշ,
- լրացվել են ոչ ըստ Հայտերին ներկայացվող պահանջների,
- պարունակում են պետական կամ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

2.8. Հայտի համապատասխանությունը վերը նշված պայմաններին երաշխավորում է Ղեկավարը:

### **3. Հայտերի լրացման կարգը և ներկայացումը**

3.1. Հայտն անհրաժեշտ է Կոմիտե ներկայացնել հայերեն լեզվով՝ մեկական տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:

3.2. Հայտը բաղկացած է 1 - 5 ձևերից:

- 3.3. Հայտի ղեկավարի ստորագրությունը պետք է լինի կազմակերպության գիտական քարտուղարի կամ ղեկավարի ստորագրությամբ հաստատված և կազմակերպության կնիքով վավերացված:
- 3.4. Հայտն անհրաժեշտ է ներկայացնել A4 ձևաչափի թղթի վրա տպված, 1.5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով («Sylfaen»՝ հայերեն և «Times New Roman»՝ անգլերեն ու ռուսերեն տեքստերի համար)՝ պահպանելով հայտի ձևերում առկա աղյուսակների ամբողջականությունը:
- 3.5. Հայտի էլեկտրոնային տարբերակը պետք է ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով՝ մեկ ամբողջական ֆայլով:
- 3.6. Հայտի հետ միասին Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.
- Ղեկավարի դիմումը (Հավելված N 3),
  - գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի որոշումը,
  - մինչև 35 տարեկան մասնակցի ասպիրանտ կամ մագիստրատուրայի ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը, որտեղ նշված է մասնագիտությունը և ուսուցման տարին:
- 3.7. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ 2017 թ. սեպտեմբերի 5-ից մինչև 2017 թ. հոկտեմբերի 20-ը ներառյալ:
- 3.8. Խմբի անունից հանդես գալու իրավունք ունի միայն Ղեկավարը:
- 3.9. «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՌԴ ԻԱՀ - 2017» մրցույթին մասնակցության համար ռուսաստանյան կողմին ներկայացվող պահանջներին կարելի է ծանոթանալ <http://fasie.ru> կայքէջում:

**Ուշադրություն. Հայտերը, որոնք չեն ուղարկվել ըստ վերը նշված կարգի և մինչև վերը նշված ժամկետը, քննարկման ենթակա չեն:**

#### 4. Նախագծերի գիտական փորձաքննությունը

4.1. Հայտերը ենթարկվում են գիտական փորձաքննության: Հայաստանյան կողմից ներկայացված հայտերի փորձաքննությունը կազմակերպում է Կոմիտեն, իսկ ռուսաստանյան կողմինը՝ *Հիմնադրամը*:

4.2. Հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է:

4.3. Հայտերը տրամադրվում են Կոմիտեի նախագահի հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ գիտական փորձաքննությունն իրականացնելու համար:

4.4. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են հայտի գիտական և գիտատեխնիկական նորոյթն ու արդիականությունը, խմբի ղեկավարի և կատարողների ձեռքբերումները գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորումը, գիտական թեմայի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, ծախսերի նախահաշվի հիմնավորվածությունը, ստացվող արդյունքի կիրառելիությունը և առևտրայնացման հեռանկարը, ինչպես նաև գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր: Նախապատվությունը տրվում է այն կազմակերպություններից ներկայացված հայտերին, որոնք կփաստարկեն իրենց գիտական կամ գիտատեխնիկական գործունեության փորձը համապատասխան բնագավառում:

4.5. *Յուրաքանչյուր հայտատու իր ներկայացրած հայտի փորձաքննության արդյունքների մասին տեղեկացվում է գրավոր:*

**Ուշադրություն.** **Հիմնադրամի կողմից ռուսաստանյան կողմի որևէ հայտատուի ներկայացրած նախագծին ֆինանսական աջակցություն հատկացնելուց հրաժարվելու դեպքում՝ Կոմիտեի կողմից նախագծի ֆինանսավորման հարցը քննարկման ենթակա չէ:**

4.6. Մրցույթի արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ:

#### 5. Այլ դրույթներ

5.1. Մրցույթի արդյուքները կամփոփվեն **2017 թվականի դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում:**

- 5.2. Ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի ղեկավարի և կատարողների միջև, ինչպես նաև Կազմակերպության ղեկավարի և Ծրագրի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր:
- 5.3. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր 5.2 կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:
- 5.4. Կողմերից յուրաքանչյուրը ֆինանսավորում է իր կողմի գիտական խմբի աշխատանքների հետ կապված ծախսերը:
- 5.5. Հայաստանյան գիտական խմբի տարեկան (12-ամսյա) ֆինանսավորման առավելագույն ծավալները կազմում են **2 250,0**, **3 375,0** և **4 500,0** հազար ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 2, 3 և 4 անձից բաղկացած գիտական խմբերի համար:
- 5.6. Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն տարեկան (12-ամսյա) գումարը չպետք է գերազանցի **1 680,0**, **2 520,0** և **3 360,0**, հազար ՀՀ դրամը՝ համապատասխանաբար 2, 3 և 4 անձից բաղկացած գիտական խմբերի համար:
- 5.7. Եթե աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարը պակաս է վերոնշյալ ծավալներից, ապա տարբերությունը կարելի է օգտագործել նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:
- 5.8 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել հետազոտական սարքավորումների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման ծախսեր: 150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող գնի սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ:
- 5.9 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ օտարերկրյա պետություններում գիտական միջոցառումներին մասնակցելու համար:
- 5.10 Մինչև երկու շաբաթ տևողությամբ գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության



2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի անդամները կարող են հայցել ամսական մինչև 1500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսյա կտրվածքով):

5.11 Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն «Այլ ծախսեր» հոդվածով յուրաքանչյուր տարվա համար նախատեսված գումարի 7 տոկոսը:

5.12 Ղեկավարի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Ծրագրի ֆինանսավորումը դադարեցվում է: Խմբի անդամի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Ղեկավարը 10-օրյա ժամկետում պետք է դիմի Կոմիտե՝ գիտական գործունեության արդյունավետության և տարիքային խմբի համարժեք փոփոխություն կատարելու կամ Խմբի անդամների թիվը մեկով կրճատելու առաջարկությամբ: Խմբի անդամների թվի կրճատման դեպքում Ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

5.13 Ֆինանսավորման երաշխավորված նախագծերի ցանկը հրապարակվում է Կոմիտեի պաշտոնական կայքում՝ [www.scs.am](http://www.scs.am):

### **Մրցույթի հայաստանյան կողմի պատասխանատու՝**

Կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության գիտական արդյունքի առևտրայնացման և ինովացիոն ծրագրերի բաժին:

Հասցե՝ 0028, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22

Հեռախոս՝ 21 01 40 + 105

## Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

<input type="checkbox"/> Դիմում
<input type="checkbox"/> Տիրույթներ ( «Ձև 1» )
<input type="checkbox"/> Նախագծի անոտացիա
<input type="checkbox"/> Նախագիծ
<input type="checkbox"/> Ղեկավարի տվյալներ ( «Ձև 2» )
<input type="checkbox"/> Տվյալներ Նախագծի կատարողի մասին ( «Ձև 3» )
<input type="checkbox"/> Ծախսերի նախահաշիվ ( «Ձև 4» )
<input type="checkbox"/> Ծախսերի նախահաշվի մեկնաբանություն ( «Ձև 4.1» )
<input type="checkbox"/> Մինչև 3 անցանկալի փորձագետների ցանկ ( «Ձև 5» )

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ**

- 1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
- 1.1 Մաթեմատիկա
- 1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ
- 1.3 Ֆիզիկա և աստղագիտություն
- 1.4 Քիմիա
- 1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ
- 1.6 Կենսաբանական գիտություններ
- 1.7 Այլ բնական գիտություններ
- 2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ**
- 2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն
- 2.2 Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
- 2.3 Մեխանիկա
- 2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն
- 2.5 Քիմիական տեխնոլոգիաներ
- 2.6 Նյութագիտություն
- 2.7 Բժշկական սարքաշինություն
- 2.8 Էկոլոգիա
- 2.9 Կենսատեխնոլոգիա
- 2.10 Նանոտեխնոլոգիա
- 2.11 Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ \_\_\_\_\_  
(անուն հայրանուն)  
\_\_\_\_\_ ից  
(ազգանուն)  
\_\_\_\_\_  
(հասցե)  
\_\_\_\_\_  
(հեռախոս)

**Դ Ի Մ ՈՒ Մ**

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող հայտը՝ հայ-ռուսական կիրառական  
հետազոտությունների համատեղ նախագծերի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՌԴ ԻԱՀ - 2017»  
միջազգային մրցույթին մասնակցելու համար:

Դիմող՝ \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ )  
(ստորագրություն) (անուն ազգանուն)

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017 թ.

**ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ  
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՌԴ ԻԱՀ - 2017» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ**

**ՀԱՅՏ**

Հայտը հանձնված է «\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 2017 թ. Ծածկագիր \_\_\_\_\_  
(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

**Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ**

1. Հայտի

- վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերենով, անգլերենով և ռուսերենով )

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

- բնագավառը \_\_\_\_\_
- մասնագիտական դասիչը \_\_\_\_\_
- բնույթը -----

2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն, ռուսերեն և անգլերեն)

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

3. Նախագծի

- նորույթը -----
- ակնկալվող արդյունքը -----

4. Հայտի ղեկավարի

- ազգանունը, անունը, հայրանունը \_\_\_\_\_
- ծննդյան թիվը \_\_\_\_\_
- գիտական աստիճանը \_\_\_\_\_
- պաշտոնը \_\_\_\_\_
- հեռախոսը \_\_\_\_\_
- էլեկտրոնային հասցեն \_\_\_\_\_

5. Կազմակերպության լրիվ, կրճատ անվանումները, կազմակերպափրավական ձևը և գերատեսչական պատկանելությունը \_\_\_\_\_
6. Կազմակերպության հասցեն, հեռախոսը, ֆաքսը և էլեկտրոնային հասցեն \_\_\_\_\_
7. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը \_\_\_\_\_ ամիս
8. Խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը \_\_\_\_\_
9. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը \_\_\_\_\_ հազար դրամ
10. Վերադիր ծախսերի գումարը \_\_\_\_\_ հազար դրամ
11. Հայցվող ընդհանուր գումարը \_\_\_\_\_ հազար դրամ
12. Հայտի ղեկավարի ստորագրությունը \_\_\_\_\_
13. Կազմակերպության գիտական քարտուղարի (կամ ղեկավարի) ստորագրությունը \_\_\_\_\_

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 2017 թ.

Կ.Տ.

## ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ\*

---

\* Համառոտ բնութագիրը:

# АННОТАЦИЯ

Руководитель проекта от Республики Армения \_\_\_\_\_  
(подпись)

Руководитель проекта от Российской Федерации \_\_\_\_\_  
(подпись)



## Ն Ա Խ Ա Գ Ի Ծ \*

- 
- \* 1. ներկայացնել խնդրի դրվածքը, ներկա վիճակը, նախագծի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 8 էջ):
2. Ներկայացնել նախագծի արդիականությունը, ակնկալվող արդյունքի կիրառելիությունը և առևտրայնացման հեռանկարը (մինչև 3 էջ):
3. նշել փվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները (մինչև 2 էջ):
4. նկարագրել նախագծի ռուսաստանյան կողմի մասնակցի կողմից իրականացվելիք խնդիրները (մինչև 2 էջ):
5. օգտագործված գրականության ցանկը:

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՂՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանուն, անուն, հայրանուն \_\_\_\_\_  
(հայերեն, անգլերեն և ռուսերեն)
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը \_\_\_\_\_
3. Գիտական աստիճանը \_\_\_\_\_
4. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը  
\_\_\_\_\_
5. Հրատարակված  
- գիտական հոդվածներ (թիվը) \_\_\_\_\_  
- մենագրություններ (թիվը) \_\_\_\_\_
6. Արտոնագրեր (թիվը) \_\_\_\_\_
7. Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները  
(նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)  
1) \_\_\_\_\_  
2) \_\_\_\_\_  
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)
8. Նշել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ից և այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհները  
1) \_\_\_\_\_  
2) \_\_\_\_\_  
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017 թ.  
\_\_\_\_\_

(ղեկավարի ստորագրությունը)

## СВЕДЕНИЯ О РУКОВОДИТЕЛЕ ПРОЕКТА С РОССИЙСКОЙ СТОРОНЫ

1. Фамилия, имя, отчество \_\_\_\_\_
2. Дата рождения \_\_\_\_\_
3. Ученая степень \_\_\_\_\_
4. Место работы \_\_\_\_\_
5. Должность \_\_\_\_\_  
\_\_\_\_\_
6. Область науки \_\_\_\_\_
7. Контактный \_\_\_\_\_ телефон
8. E-mail \_\_\_\_\_

Руководитель проекта от Российской Федерации \_\_\_\_\_

*(подпись)*

**ՆԱԽԱԳԾԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՂՄԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ  
ՏՎՅԱԼՆԵՐԸ\***

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (աշխատանքային, բնակարանի, բջջային)	
Էլեկտրոնային հասցե	
Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1.	
2.	

\* Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար:

## СВЕДЕНИЯ О РОССИЙСКОМ УЧАСТНИКЕ ПРОЕКТА\*

1. Фамилия, имя, отчество \_\_\_\_\_
2. Дата \_\_\_\_\_
3. Место работы \_\_\_\_\_
4. Должность \_\_\_\_\_
5. Учёная степень / учёное звание  
\_\_\_\_\_

Руководитель проекта от Российской Федерации \_\_\_\_\_  
(подпись)

---

\* Заполняется для каждого участника.

**ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ**

Հայտի ծածկագիրը \_\_\_\_\_  
 (լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

<b>ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ</b> (ներառյալ եկամտային հարկ, հազար դրամ)						
Ազգանուն, անուն	2018 թվական			2019 թվական		
	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը
1)						
2)						
3)						
4)						
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>						
<b>ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում</b>						
<b>1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ</b> (ներառելով՝ ներառելով ծախսեր գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման, սարքավորումների և գրենական պիտույքների համար: Թվարկել 150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել նախահաշվի մեկնաբանության մեջ)					2018 թվական	2019 թվական
1)						
2)						
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>						
<b>2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ</b> (հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)						
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր						
2) տեղական գործուղումների օրապահիկ						
3) տեղական գործուղումների գիշերավարձ						
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր						
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ						
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ						
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)						
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>						
<b>3. ԵՆԹԱԿԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b> (նշել ենթապայմանագրային համագործակցության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, համագործակցությունը մանրամասն նկարագրել նախահաշվի մեկնաբանության մեջ) <b>Ենթապայմանագրային համագործակցության վարձավճար</b>						
Ազգանուն, անուն, հայրանուն	2018 թվական			2019 թվական		
	Օրավարձը	օրերի քանակը	Պահանջվող գումարը	Օրավարձը	օրերի քանակը	Պահանջվող գումարը
1)						
2)						
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>						
<b>Ենթապայմանագրային համագործակցության նյութեր և ծառայություններ</b> (Թվարկել 150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր կետերը և հիմնավորել)					2018 թվական	2019 թվական
1)						
2)						
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>						
<b>ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ</b>						
<b>ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>						
<b>ԱՅԼ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ</b> (ներկայացնել նախահաշվի մեկնաբանության մեջ)						

Հայտի ղեկավար՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության \_\_\_\_\_ գլխավոր \_\_\_\_\_ հաշվապահ՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (ազգանուն, անուն, հայրանուն)

**ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ\***

---

\* Բացադրել և հիմնավորել ֆինանսական նախահաշվի բոլոր կետերը

**ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑԱՆԿ\***

N°	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ
1.	
2.	
3.	

---

\* Նշել մինչև 3 փորձագետներ, ում հետ հնարավոր են շահերի բախումներ: